ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 264-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 35-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված պարիսպը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից 02.08.2021թ. տրված թիվ N 696 և N 697 տեղեկանքները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 7.45 քմ արտաքին մակերեսով պարիսպի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան մասում գտնվող, 2005թ. ինքնակամ կառուցված, 7.45 քմ արտաքին մակերեսով պարիսպը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.03144 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան մասում գտնվող, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 28-րդ փողոց, 21/1 փոստային հասցե:
4. 0.03144 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված պարիսպի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Աննա Գառնիկի Պարանյանին օրինականացված պարիսպը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. օգոստոսի 16
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 265-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 29.07.2021թ. N 78-Ն, N 79-Ն և N 81-Ն որոշումները, համայնքային սեփականության իրավունքի վկայականները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/16-1/11 հասցեում գտնվող, 0.06 հա մակերեսով հողամասը՝ 475200 դրամ մեկնարկային գնով:
2. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սպանդարյան փողոց, N 9-5/1 հասցեում գտնվող, 0.0015 հա մակերեսով հողամասը՝ 60000 դրամ մեկնարկային գնով:
3. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 75/5 հասցեում գտնվող, 0.00288 հա մակերեսով հողամասը՝ 230400 դրամ մեկնարկային գնով:
4. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 15000 դրամ և քայլի չափ՝ մեկնարկային գնի 5 %-ի չափով:
5. Վերը նշված հողամասերի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:
6. Բոլոր վճարումները կատարել ՀՀ արժույթով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. օգոստոսի 18
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 266-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 35-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված շինությունները՝ պահեստը, ծածկը, աստիճանները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից 13.08.2021թ. տրված N 754 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 216.925 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (153.3 քմ ներքին մակերեսով) պահեստի, ծածկի, աստիճանների նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան մասում գտնվող, 1992թ. ինքնակամ կառուցված, 216.925 քմ ընդհանուր արտաքին մակերեսով պահեստը, ծածկը, աստիճանները՝ սպասարկման համար զբաղեցրած 0.1922 հա մակերեսով հողամասով:
3. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան մասում գտնվող, գյուղարտադրական նշանակության հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 28-րդ փողոց, 13/7 փոստային հասցե:

4. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված պահեստի, ծածկի, աստիճանների նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Անահիտ Ոսկանյանին օրինականացված պահեստը, ծածկը, աստիճանները և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. օգոստոսի 18
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 267-Ա

ԼԻԼԻԹ ՍԵՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 12.08.2021թ. արձանագրությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկ 18/18 հասցեի բնակիչ Լիլիթ Սենիկի Հարությունյանին նշանակել քաղաքացի Նելի Վահագի Վերանյանի /ծնված՝ 25.08.1962թ./ պատրոն /օգնական/:
2. Լիլիթ Սենիկի Հարությունյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու Նելի Վահագի Վերանյանին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. օգոստոսի 18
ք. Ալավերդի